

ՄՈՒԴՐՈՍԻ ԶԻՆԱՊԱՐԾ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ\*

Սամվել Պողոսյան

Բանալի բառեր՝ Հայկական հարց, Մուդրոսի գինադադար, Առաջին աշխարհամարտ, Սկրի համաձայնագիր, Արևմտյան Հայաստան, Կիլիկիա

Պատմագիտության մեջ բավական տեղ է հատկացվել օսմանյան կայսրության ճակատագրի 1919-1920 թթ. միջազգային քննարկումներին, որոնց արդյունքում 1920 թ. օգոստոսի 10-ին ստորագրվեց Սկրի համաձանագիրը: Սակայն ակնհայտ էր, որ այդ փաստաթուղթը իրականություն դարձնելու հնարավորություն ստորագրման պահին արդեն չկար:

Հայկական հարցի լուծումը նույնպես կապվում էր Սկրի հաշտության հետ: Հայ ազգային-ազատագրական շուրջ 40-ամյա պայքարը և Հայկական հարցի շուրջ ծափակած միջազգային քաղաքական գործընթացները Առաջին աշխարհամարտից հետո կարող էին հասնել նոր հանգրվանի հայկական անկախ և միացյալ պետության ստեղծմանը: Մինչև աշխարհամարտը անհավատալի երազանք համարվող, իսկ պատերազմի ավարտից անմիջապես հետո շատ մոտ թվացող միացյալ, անկախ Հայաստանի գաղափարը 1919 թ. կեներից սկսեց հետզհետեւ ավելի մշուշու դարնալ:

Սկրի համաձայնագրի շիրականանալը պայմանավորված էր մի շարք միջազգային գործընթացներով, քենալական շարժման ծևավորմամբ, նորաստեղծ Հայաստանի Հանրապետության թուլությամբ: Սակայն վերոնշյալ պատճառների արմատներն անհրաժեշտ է փնտել Մուդրոսի գինադադարի պայմանների մեջ, որոնց բացասական և չափազանց ծանր հետևանքները հայ ազգն ստիպված էր մաշկի վրա անմիջականորեն զգալու հաջորդող երկու-երեք տարիներին:

Այս ուսումնասիրության նպատակն է վերլուծել Մուդրոսի գինադադարի հետևանքները Հայկական հարցի լուծումը ծախսողելու գործընթացում:

1918 թ. հոկտեմբերին ակնհայտ էր դարձել, որ Առաջին համաշխարհային պատերազմում Քայոյակ դաշինքի երկրները պարտվում են: Հայ գործիքները նման պայմաններում անհրաժեշտ էին համարում քայլեր ծերնարկել՝ պաշտպանելու հայության շահերը ապագա հաշտության բանակցություններում:

Հոկտեմբերի 8-ին Հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարը Անտանտի երկրներին հուշագիր ներկայացրեց, ուր պահանջում էր գինադադարի պայմանների մեջ մտցնել հայերի շահերը պաշտպանող հետևյալ հոդվածները.

1. Տեղահանված և զաղթական հայերի վերադարձը հայրենիք դաշնակից գորքերի պաշտպանության տակ:

2. Հայկական վեց նահանգների ու Կիլիկիայի բոլոր ռազմական կետերի գրավում:

3. Արգելել Օսմանյան կառավարությանը կազմակերպելու թուրքերի ներգաղթ այդ նահանգների մեջ:

4. Դաշնակից բանակների կողմից անհրաժեշտ միջոցներ ծերնարկել սովահար հայ բնակչության գոյությունը ապահովելու և երկիրը վարչականորեն կազմակերպելու համար:[1]

\* Հոդվածն ընդունվել է 25.01.2016:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ՍՍՀ պատմության ամբիոնը:

## ՄԵՄՐՈԴ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

Այդ չորս կետերի գործադրումը կարող էր հնարավորություն տալ արագորեն ազատագրելու Հայաստանը (Արևմտյան Հայաստանը և Կիլիկիան), ցեղասպանությունից մազապուրծ զաղթականներին վերադարձնելու հայրենի օջախներ ու փրկելու ոչնչացումից, վարչականորեն կազմակերպելու հայկական պետականությունը:

Պ. Նուբարդ բարձրաստիճան պետական գործիչների հետ հանդիպումներում նաև բարձրացնում էր հայերին պատերազմող կողմնաչելու հարցը: Իսկ հոկտեմբերի 29-ին նա պաշտոնապես դիմեց Անտանտի երկրներին, որպեսզի հայերին ճանաչեն պատերազմող կողմ:[2] Դա միջազգային իրավունքի տեսանկյունից կատարված ճշշտ և խորապես մտածված քայլ էր: Նա յավ էր պատերազմում միջազգային այն չափանիշները, ըստ որի՝ միջազգային իրավունքի սուբյեկտ են ճանաչվում ոչ միայն ինքնիշխան (սուվերեն) պետությունները, այլև ազգային-ազատագրական շարժումները՝ հանձին իրենց ղեկավար մարմինների: Այդպիսին կարող էր ճանաչվել Ազգային պատվիրակությունը կամ փաստացի գոյություն ունեցող Հայաստանի Հանրապետությունը, որը դեռևս միջազգայնորեն ճանաչված պետություն չէր: Այսպիսով՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտ հանդես գալու համար անհրաժեշտ էր հայերին պատերազմող կողմնաչելը: Նաև այդ հեռավար նպատակի համար էր, որ Պ. Նուբարն աջակցեց կամավորական շարժմանը, իսկ 1916 թ.՝ Արևելյան (Հայկական) լեգեոնի կազմավորմանը: Պետք է նշել, որ նրա այդ քայլերը դրական արձագանք ունեցան:

Հոկտեմբերի 25-ին Ֆրանսիայի ԱԳ նախարար Ստեֆան Պիշոնին ուղարկած գեկուցագրում Արևելյան դեպարտամենտի ղեկավար Ժան Գուն տեղեկացնում էր, որ Հայազգային պատվիրակության նախագահը պահանջել է հայերին ճանաչել պատերազմող կողմ: Նշում էր, որ նույնանման դիմումներ ուղարկվել են նաև Սեծ Բրիտանիայի և Իտալիայի կառավարություններ: Ժ. Գուն Արևելյան լեզենը և Կովկասից Պարսկաստան տեղափոխված և բրիտանացիների հետ համագործակցող հայկական ուժերը համարում էր պատերազմող կողմ: Նա առաջարկում էր Պ. Նուբարին պատասխանել, որ Ֆրանսիան պատրաստ է հայերին ճանաչելու պատերազմող կողմ, եթե դա անեն նաև մյուս դաշնակիցները: Միաժամանակ, առաջարկում էր Սիրիայում ֆրանսիական գործերի հրամանատարին հրահանգել, որ Արևելյան լեգեոնին տրամադրեն հայկական դրոշներ, որը ցույց կտար հայերի ինքնավար գոյության իրավունքի ճանաչումը:[3]

Ս. Պիշոնը հայտարարեց, որ «Հայկական լեգեոնն ու նրա քաջագործությունները ցայտուն կերպով հաստատում են, որ «Ֆրանսիան հայերը կտան թուրք-գերմանական զինվորակացության լուծք թորակելու համար պայքարող դաշնակիցներ»:[4]

Ինչպես տեսնում ենք, Պ. Նուբարի ջանքերը որոշակի արդյունք էին տալիս: Ֆրանսիացի բարձրաստիճան գործիչներն արդեն քննարկում էին հայերին պատերազմող կողմ ճանաչելու հարցը և ֆրանսիական դրոշի ներքո մարտնչող Արևելյան լեզենը դիմում էին որպես հայկական գորախումբ, որի խնդիրն էր հայկական տարածքների պատագրում: Ֆրանս-բրիտանական զաղունի համաձայնագրերով (Լոնդոնի, Սայքս-Պիկոնի, Սեն Ժան Սուր Ռենի) Կիլիկիան և Հայաստանի հարավային և արևմտյան նահանգները պատերազմից հետո համարվում էին ֆրանսիական ազդեցության գոտի: Հնուսարար, Ֆրանսիայի արտաքին գերատեսչության վերաբերմունքը կարող էր որոշակիորեն պայմանավորել Հայաստանի ապագան:

Սակայն թուրքերի հետ Մուդրուսում բրիտանական ռազմական իշխանությունների կնքած զինադադարի պայմանագիրը, որը ստորագրվել էր առանց դաշնակիցների շահերը հաշվի առնելու, հիմնականում հակասում էր հայության զգություններին: Պատերազմի ավարտական փուլում արդեն իսկ սրբել էին ֆրանս-բրիտանական հակասությունները Մերձավոր Արևելքում: Զնայած նախկինում ստորագրած գաղտնի համաձայ-

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

նագրերին ու պայմանավորվածություններին՝ բրիտանացիները փորձում էին ֆրանսիային թույլ չտալ ամրապնդվելու Մերձավոր Արևելքում. մանավանդ՝ ֆրանսիական ուժեր այստեղ գրեթե չկային, եթե չհաշվենք Արևելյան լեզենը:

1918 թ. հոկտեմբերի 15-ին թուրքական կողմը բրիտանացիներին խնդրեց առաջարկել զինադադարի պայմաններ: Հոկտեմբերի 27-ին սկսվեցին ռազմական գործողությունները դադարեցնելու շուրջ բանակցություններ Լեմնոս կղզու Մուլդոսի նավահանգստում բրիտանական «Ազամեմնոն» հածանավի վրա: Բրիտանական կողմից այն վարում էր ծովակալ Արթուր Թալթորփը (Somerset Arthur Gough-Calthorpe), թուրքականից՝ ծովային նախարար Հուսեին Ռաուֆ բեյը: Ֆրանսիական փոխծովակալ Օմետը (Jean-François-Charles Amet) ցանկություն հայտնեց մասնակցելու բանակցություններին, սակայն բրիտանական և թուրքական կողմերը մերժեցին [5]:

Հոկտեմբերի 30-ին Մուլդոսի ստորագրված զինադադարով թուրքերն անձնատվության (կապիտուլիացիայի) ենթարկվեցին: Զինադադարի համաձայնագրի մի քամի հոդվածներ անմիջականորեն առնչվում էին հայկական շահերի հետ.

Հոդված 4. Բոլոր դաշնակցային ռազմագերիները, բոլոր հայ բանտարկյալները և ներկալվածները պետք է ժողովվեն Կ. Պոլսում, որպեսզի առանց որևէ պայմանների հանձնվեն դաշնակիցներին:

Հոդված 10. Տավրոսի թունելների համակարգի գրավում դաշնակիցների կողմից:

Հոդված 11. Թուրքական գորքերը անմիջապես հետ են քաշվելու հյուսիսարևմտյան Պարսկատանից մինչև նախապատերազմյան սահմանը: Թուրքական գորքերն արդեն ստացել են Անդրկովկասի մի մասը Էվակուացնելու հրաման, ընդ որում մնացած գորքերը կերպացվեն, եթե տեղերում իրադրությունն ուսումնասիրելուց հետո դաշնակիցները ներկայացնեն այդպիսի պահան:

Հոդված 16. Հեջազում, Ասիրում, Եմենում, Սիրիայում և Միջագետքում գտնվող բոլոր թուրքական կայազորները պետք է հանձնվեն մոտակա դաշնակցային հրամանատարությանը, բոլոր գորքերը դուրս էին բերվելու Կիլիկիայից՝ բացառությամբ նրանցից, որոնք անհրաժեշտ են կարգը պահպանելու համար, ինչը կարող է որոշվել համաձայնագրի 5-րդ հոդվածով:

Հոդված 24. Հայկական վեց վիլայեթներում անկարգություններ ծագելու դեպքում, դաշնակիցներն իրենց վերապահում են նրա մի մասը գրավելու իրավունք [6]:

Ինչպես տեսնում ենք, ոչ միայն Պ. Նուբարի պահանջները չեն ընդգրկված և հայկական վեց վիլայեթների հսկողությունը թողնված էր թուրքերին, այլև նույնիսկ Անդրկովկասի մի մասում կարգուկանոնի պահպանությունը իրականացնելու պատրիվակով թուրքական գորքերը չեն հեռանալու մինչև «տեղերում իրադրությունը ուսումնասիրելուց հետո դաշնակիցները ներկայացնեն այդպիսի պահանջ»: Փաստորեն, Մուլդոսի զինադադարով Հայաստանի մեծ մասը թողնվում էր թուրքական գորքերի վերահսկողությանը, որը հետագայում հանգեցրեց Հայկական հարցի տապալմանը:

Այդ պայմանագրից երևացին հայերին խարելու «դաշնակիցների» քաղաքականության արագին քայլերը, որոնք ի վերջո հանգեցրին հայության ճգոտումների ամրողական տապալմանը լոգամում: Սակայն այս շրջանում հայ քաղաքական գործիչները դեռևս գտնվում էին ովարության մեջ, և նրանց թվում էր, որ մի քանի դար տևած անկախության կորստից հետո արդեն մոտ է ազատ, անկախ, միացյալ Հայրենիք ունենալու համարավորությունը: Ցավոք, այդ գեղեցիկ հեռանկարը հետագա ամիսներին մոտենալու փոխարեն հետզինետ հեռացավ:

Հոկտեմբերի 31-ին Բելջինում Համագասապ Օհանջանյանի ղեկավարած ՀՀ պատվիրակությունը խորհրդակցություն գումարեց, որին ներկա էին Մովսես Ամենյանը, դոկ-

## ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

սոր Գրինֆելդը, Ավետիսյանը, Ռւկրախնայում ՀՀ ներկայացուցիչ Գրիգոր Զամոյանը: Քննարկելով միջազգային իրավիճակը՝ նրանք եկան այն եզրահանգմանը, որ անհրաժեշտ է միավորել Ոուսահայաստանը և Թուրքահայաստանը միասնական անկախ պետության մեջ, որը հայտարարելու է հավերժական չեղոքություն: Եթե միավորումը անհնար լիներ, պետք է ստեղծվեր անկախ Հայաստան՝ արևմտահայկական նահանգների ու Կիլիկիայի հենքի վրա՝ ծովային ելքերով Միջերկրական և Սև ծով՝ Տրավիզոնով[7]:

Պ. Նուբարը նոյեմբերի 7-ին և 12-ին դաշնակից տերություններին բողոքի նոտամեր հետեւ Մուղրոսի պայմանագրով հայկական տարածքներում կարգի պահպանությունը թուրքերին թողնելու առթիվ, նշելով, որ այդպիսով հայ գաղթականները չեն կարողանա վերադառնալ իրենց օջախները, իսկ թուրքերը կվայելեն երիտրուրքերի «արիւնուշտ քաղաքականութեան պտուղը»[8]: Նա պահանջեց հայկական տարածքները անմիջապես գրավել դաշնակից գորքերի և Արևելյան լեգենի ուժերով:

Սակայն նրա բողոքները անպատասխան մնացին «դաշնակիցների» կողմից, որոնք արդեն մոռացել էին պատերազմի տարիներին հայ ժողովրդին շռայլած խոստումները և մրցապայքար էին սկսել աշխարհի նոր վերաբաժանման, ավելի ընդարձակ գաղութներ ծեռք բերելու համար և ժամանակ չունեին մոտաժելու այնպիսի փոքր դաշնակից մասին, ինչպիսին Հայաստանն էր:

Զինադադարի պայմաններից դրական էր այն, որ հայ ներկալվածներին (այս եղույթի տակ հասկանում էին ցեղասպանության ժամանակ բռնագաղթի ենթարկված և համակենտրոնացման ճամբարներում գտնվող հայության մնացորդներին) պետք է հանձնեին Անտանտի դաշնակիցներին:

Պայմանագրի կետերից հայանպաստ պահանջ էր Կիլիկիայից թուրքական գորքերի հեռացումը և Տավրոսի լեռնահանակարգի թունելների վերահսկողությունը վերցնելը:

1918 թ. նոյեմբերի 19-ին լորդ Ֆ. Բրայսը և Քենտրոնական արքայի կողմանը խորհրդարանում բրիտանական կառավարությունից պահանջեցին դաշնակցային գորքերով Կիլիկիան գրավել և հայերին չմոռանալ: Գլխավոր կնքապահ Կրեֆորդի դուքս Էլուարդ Լինդսին (Earl of Crawford, David Alexander Edward Lindsay) պատասխանեց, որ դաշնակիցները քննարկում են Կիլիկիան գրավելու հարցը, իսկ «կառավարությունը լրիվ գիտակցում է իր պարտականությունները այդ (այսինքն՝ հայ-Ա.Պ.) ժողովրդի ազգային ու մարդկային շահերի նկատմամբ, և վճռել է ոչ մի ջանք չխնայել հայ ազգի պահանջները և իրավունքները պաշտպանելու համար»[9]:

Նոյեմբերի վերջից մինչև դեկտեմբերի երկրորդ կեսը Հայկական լեգենի ուժերով Կիլիկիան ազատագրվեց թուրքերից: Զինադադարի 16-րդ հոդվածը հնարավորություն տվեց արագործն և առանց արյուն թափելու ազատագրել հայկական այդ երկրամասը, ուր վերադարձան և նոր կայսեր փորձեցին սկսել շուրջ 150-200.000 հայեր:

1918 թ. նոյեմբերին Պ. Նուբարը ֆրանսիական մամուլին տված հարցագրույցում ներկայացրեց այն սկզբունքները, որոնց հիման վրա պետք է լուծվեր Հայկական հարցը՝

1. Այլևս ոչ մի կապ թուրքական պետության հետ,
2. Հայկական պետությունը ունենալու է հանրապետական վարչածն և դրվելու է ազատարար ազգերի պաշտպանության տակ, որոնցից մեկը ստանձնելու է Հայաստանի խնամակալությունը մինչև այն կազմակերպվի և կարողանա իմբռուրույն գյատնել,

3. Հայաստանի մեջ են մտնելու վեց վիլայեթները և Կիլիկիան: Պ. Նուբարը նշեց «ռուսական» Հայաստանի նկատմամբ որևէ պահանջ չունենալու մասին, սակայն հուս հայտնեց, որ նոր սկզբունքներ որդեգրած Ոուսաստանը, որը հայտարարել էր լեհա-

## ՄԵՍՐՈՊ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱՍՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

կան ու ֆինլանդական խնդիրները լուծելու մասին, այս հարցում ևս արդարացի մոտեցում կցուցաբերի[10]:

Այդ սկզբունքները Պ. Նուբարը զարգացրեց 1918 թ. դեկտեմբերին հրապարակած «Հուշագիր Հայկական հարցի մասին» գրքույկում[11]: Նա անհրաժեշտ էր համարում վեց վիճակներից, Կիլիկիայից ու Մարաշի սանջակից կազմել հայկական պետություն, որը մինչև վերջնական կազմակերպվելը կորպի որևէ պետության խնամակալության տակ: Պ. Նուբարը նշում էր, որ այդ պետությանը կմիանա նաև Արարատյան Հանրապետությունը, և Հայաստանը պատնեշ կիանդիսանա պամթութիզմի գաղափարի դեմ:

1918 թ. նոյեմբերի 30-ին Պ. Նուբարն ի լուր աշխարհի հայտարարեց «Ամբողջական Հայաստանի» անկախությունը[12]: Հայտարարության մեջ նշված էր, որ, հայ ազգի միակամ փափառի համաձայն, Ազգային պատվիրակությունը հայտարարում է Ամբողջական Հայաստանի (ներառյալ Կիլիկիայի) անկախությունը: Իսկ *La Voix de l'Arménie* թերթում տպագրած հոդվածում Պ. Նուբարը շեշտեց «Թուրքա» և «Ռուսա» Հայաստանների միավորմանը Միացյալ Հայաստանի ստեղծման կենսական անհրաժեշտությունը: «Հայաստանը պետք է ըլլայ մէկ ամրող, ազատ, անկախ, - գրում էր նա,- այս է ահա Հայ արհինու դասի միակ արդար լուծման միակ հաստատուն գրավականը»[13]:

Դեկտեմբերի 10-ին ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահի Հենրի Լոզը (Henry Cabot Lodge) կոնգրեսի քննարկմանը ներկայացրեց քանածն Անկախ Հայաստանի ստեղծման մասին: Հայաստանի կազմի մեջ էին մտնելու Ուստասանի, Թուրքիայի, Իրանի բոլոր հայկական տարածքները՝ Կիլիկիայով հանդերձ: Նորանկախ պետության հովանավորությունը սենատորն առաջարկում էր, որ ստանձնի ԱՄՆ-ը:[14]

Այսպիսով՝ նապաստավոր պայմաններ էին ստեղծվել միացյալ հայկական պետության ստեղծման համար: Սակայն Պ. Նուբարը, արդարացիորեն, չափազանց դժգոհ էր Անտանտի երկրների գործողություններից, որոնք արդեն հակասում էին նախկինում տրված խոսուումներին[15]: Այսպիսով՝ Ազգային պատվիրակության նախագահը հետզիեստ դնում էր միացյալ հայկական պետականության ստեղծման գործընթացի սկիզբը, սակայն հետագա իրադարձությունները թույլ չտվեցին իրականացնել հայ ժողովրդի դարավոր իշխան և կազմավորել ընդարձակ ու կենսունակ անկախ պետություն:

Հայկական պետականության կայացման ճանապարհին գիշավոր խոշմբուտ հանդիսացավ Մուլրոսի համաձայնագրի 24-րդ հոդվածը, որով Արևմտյան Հայաստանը թողնվում էր թուրքական գրավման տակ և միայն ինչ-ինչ անկարգություններ ծագելու դեպքում դաշնակիցները կարող էին գրավել նրա մի մասը: Փաստորեն՝ Հայաստանի մեծագույն մասը մնաց թուրքերի ծեռքում: Բացի այդ, Մուլրոսի գիշադադարի 5-րդ հոդվածով թուրքական բանակն ամբողջությամբ չգիտապահվեց և չզորացրվեց: Վերոնշյալ երկու կետերը հնարավորություն տվեցին հետագայում սկսելու թեմայական շարժումը, որը ծախողեց Անտանտի երկրների ծրագրերը, ինչպես նաև ջախջախիչ հարված հասցրեց հայության ձգուումներին:

Պատմությունը կարող էր այլ ընթացք ունենալ, եթե Մուլրոսի գիշադադարի պայմաններում ներառվեր հոդված, որով թուրքական գորքերը կպարտավորվեին անմիջապես հեռանալ Արևմտյան Հայաստանից: Դա հնարավորություն կտար առանց արյուն թափելու ազատագրել հայկական նահագները, ինչպես եղավ Կիլիկիայում: Հայ գաղթականությունը հնարավորություն կտանար արագորեն վերադարձնալու հայրեմիք և վերաշինելու ավերված օջախները: Միաժամանակ, թուրքերը կզրկվեին թեմայական շարժում սկսելու համար անհրաժեշտ տարածքից: Ինչպես գիտենք, այդ շար-

## **ՄԵՍՐՈՊ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ՂՈՏՏՈՒ 2016**

Ժումը սկզբնավորվեց Կարինի (Էրգրումի) և Սեբաստիայի (Սվաղի) հայկական նահանգներում:

Ամփոփելով՝ նշենք, որ Մուդրոսի գինադադարում դրվեցին այն հիմքերը, որոնք խոչընդոտեցին Հայկական հարցի արդարացի լուծումը, ձախողեցին Սևրի համաձայնագիրը և հանգեցրին Լոզանում հայկական ծգուումների տապալմանը:

### **ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. ՀԱԱ, §. 430, գ. 1, գ. 26, թ. 15:
2. Աձեմեան Լ., Եզիապտահայ տարեցոյ 1925, Աղեքսանդրիա, 1924, էջ 87:
3. Պեյլերյան Ա., Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), Առաջարանը ժամ-Բատիստ Շյուրոգելի, ֆրանսերենից թարգմ. Վ. Պողոսյանը, հ. Բ, Եր., 2005, էջ 399:
4. Արզումանյան Ս., Արհավիրքից Վերածունդ, Եր., 1973, էջ 409:
5. Fromkin D., A Peace to End All Peace: The Fall of the Ottoman Empire and the Creation of the Modern Middle East, New York, 2009, pp. 360-373.
6. Frederick Maurice, The Armistices of 1918, OUP, 1943, pp. 85-87. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթթերում, խմբագիր Զ. Կիրակոսյան, Եր., 1972, էջ 537-539:
7. Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Եր., 1997, էջ 328:
8. Աձեմեան Լ., Եզիապտահայ տարեցոյ 1926, Աղեքսանդրիա, 1925, էջ 101:
9. ՀԱԱ, §. 200, գ. 1, գ. 131, թ. 35:
10. «Վերածնունդ», 1918, թիւ 21-22: «Ճակատամարտ», 1919, թիւ 43:
11. Memorandum on The Armenian Question. Presented by the Armenian National Delegation, Paris, 1918.
12. ՀԱԱ, §. 282, գ. 1, գ. 46, թ. 1: ՀԱԱ, §. 200, գ. 1, գ. 131, թ. 58:
13. «Ճակատամարտ», 1919, թիւ 40:
14. Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Եր., 1999, էջ 58:
15. ՀԱԱ, §. 282, գ. 1, գ. 46, թ. 1:

### **ԱՍՓՈՓԱԳԻՐ**

#### **Մուդրոսի գինադադարը և հայկական հարցը Սամվել Պողոսյան**

Հայկական հարցի շուրջ ծավալված միջազգային քաղաքական գործընթացներն Առաջին աշխարհամարտից հետո կարող էին հասնել նոր հանգրվանի՝ հայկական անկախ և միացյալ պետության ստեղծմանը: Սակայն 1920 թ. ստորագրված Սևրի համաձայնագիրը իրականություն չդարձավ, որ պայմանագրոված էր մի շարք միջազգային գործընթացներով, քենալական շարժման ձևավորմամբ, Հայաստանի Հանրապետության թուլությամբ: Սակայն վերոնշյալ պատճառների արմատներն անհրաժեշտ է փնտորել Մուդրոսի գինադադարի պայմանների մեջ, որոնք բացասական և ծանր հետևանքներ ունեցան հայկական հարցի համար:

**РЕЗЮМЕ**

**Мудросское перемирие и Армянский вопрос**  
**Самвел Погосян**

**Ключевые слова:** Армянский вопрос, Мудросское перемирие, Первая мировая война, Севрский договор, Западная Армения, Киликия.

Международный политический процесс вокруг Армянского вопроса мог бы выйти на новый уровень после Первой мировой войны: создание независимого и единого государства. Однако Севрское соглашение, подписанное в 1920 году не было реализовано, которое было связано с международными процессами, формированием кемалистского движения, слабостью Армении. Тем не менее, основные причины следует искать в условиях Мудросского перемирия, что и привело к отрицательным и серьезным последствиям для Армянского вопроса.

**SUMMARY**

**The Mudros Armistice and the Armenian Question**  
**Samvel Poghosyan**

**Keywords:** Armenian Question, Mudros armistice, First World War, Sevres Treaty, Western Armenia, Cilicia

The international political process around the Armenian Question could have reached a new level after the World War I: the creation of an independent and unified state. However, the Sevres Treaty signed in 1920 wasn't realized due to a number of international processes, the formation of the Kemalist movement and Armenia's weakness. However, the original causes can be found in the conditions of Mudros armistice, which led to serious negative consequences for the Armenian Question